

ԿԱՐԳ
**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՍՆԱԼԻՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ**

1. "Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կանոնադրության 4-րդ կետի "գ" եւ 5-րդ կետի "գ" ենթակետերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված "Գիտական եւ գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգին" համապատասխան սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների եւ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետեւ՝ պատասխանատու մարմիններ) կողմից կարգավորվող ոլորտներում գիտության եւ տեխնիկայի բնագավառին առնչվող նպատակային ծրագրերի համալիր նախագծերի (այսուհետեւ՝ ծրագրերի նախագծեր) Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարություն (այսուհետեւ՝ նախարարություն) ներկայացման կարգը:

2. Ծրագրերի նախագծերը պատասխանատու մարմինները նախարարություն են ներկայացնում նախարարության հրավերով սահմանված ժամկետում:

3. Ծրագրերի նախագծերը պետք է պարունակեն տեղեկություններ.

ա) նպատակների եւ խնդիրների,

բ) արդիականության,

գ) ծավալների եւ դրանց իրականացման ժամկետների,

դ) ակնկալվող արդյունքների,

ե) ավարտական ձեերի վերաբերյալ,

զ) ունենան կից նախահաշիվներ:

Ծրագրերի նախագծերում պետք է առանձնացվեն փուլեր՝ նշելով դրանց իրականացման ժամկետները եւ առաջադրանքները, տեխնիկատնտեսական ցուցանիշները եւ ֆինանսավորման ծավալները՝ համապատասխան հաշվարկներով ու հիմնավորումներով:

4. Նախարարությունը ծրագրերի նախագծերը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում համակարգում է դրանք եւ տրամադրում համապատասխան մասնագիտական փորձագիտական խորհուրդներին, որոնք գործում են համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի 20.11.01 թ. N 522-Մ հրամանով հաստատված "Մասնագիտական փորձագիտական խորհուրդների ձեւավորման կարգի":

5. Մասնագիտական փորձագիտական խորհուրդները 10-օրյա ժամկետում իրականացնում են նախագծերի փորձաքննությունը:

6. Գիտական եւ գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի նախագծերը քննարկելու նպատակով նախարարությունը ստեղծում է հանձնաժողով, որի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարը (նախագահ), նախարարի տեղակալը, ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտն ու համապատասխան նախարարների տեղակալները, նախարարության գիտության եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչության պետը (քարտուղար):

7. Դրական եզրակացություն ստացած նախագծերը նախարարության կողմից հինգօրյա ժամկետում ամփոփվում են եւ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ սահմանված կարգով ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարություն: